Պերսեպոլիսի տնօրենն այցելել է Էրեբունի արգելոց -թանգարան



2015թ. սեպտեմբերի 30-ին, էրեբունի արգելոց-թանգարան է այցելել Իրանի Պերսեպոլիս /Թախտեջամշիդ/ թանգարանի տնօրեն Սեյեդ Ռեզաին: էրեբունի թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանի ուղեկցությամբ Պերսեպոլիսի տնօրենը նախ ծանոթացել է թանգարանի մշտական ցուցադրությանը, ապա դիտել օրեր առաջ թանգարանում բացված «էրեբունիից Պերսեպոլիս. ուրարտական և աքեմենյան մշակույթների հանգույցում» ցուցահանդեսը, որը կազմակերպվել էր Իրանի ԻԿՕՄ-ի և էրեբունի արգելոց-թանգարանի համագործակցությամբ:

Թանգարանի Պատվավոր հյուրերի գրքում կատարած գրառման մեջ Պերսեպոլիսի տնօրենը նշել է, որ ուրարտական և իրանական մշակույթների հզորությունն ու մերձությունը հպարտության առիթ է, և Պերսեպոլիսի լուսանկարների ցուցադրությունը էրեբունիում երկու երկրների թանգարանների միջև նոր համագործակցության և հարաբերությունների ջերմացման հրաշալի հնարավորություն է:

էրեբունի կատարած այցի շրջանակում Պերսեպոլիսի տնօրենը հանդես է եկել բովանդակալից դասախոսությամբ՝ ներկայացնելով Պերսեպոլիսի պահպանության և վերականգնման հիմնական հարցերը և պատմելով թանգարանի ներկայիս գործունեության մասին: Պերսեպոլիսի տնօրենը եղել է նաև էրեբունի միջնաբերդում: Արգելոց-թանգարանի աշխատակազմին շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ նա նշել է, որ նմանատիպ ցուցահանդեսներ և մշակութային այլ միջոցառումներ հարկ է կազմակերպել նաև Պերսեպոլիսում:

1 / 1